# ԽՕՍՔ
# ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԱՌԹԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

*Սիրելի ունկնդիրներ,*

*Հաւատացեալ և հաւատաւոր հայորդիք,*

*Սիա ողջ աշխարհի մարդկութեան հետ միասին հրաժեշտ ենք տալիս այսպէս ասած «Հին» Տարուան և բարի գալուստ ենք մաղթում «Նոր» Տարուան: 1996 թուականով հանգուցու�է մեր կեանքը ժամանակի տարածքում, մարդկային կեանքի պատմութեան բազմահանգոյց շղթայի վրայ: Բացուում է մի նո՛ր ժամանակահատուած. գալիք 366 օրերին մեր աչքերը հանդիպելու են 1996 թուին և մեր ձեռքերը արձանագրելու են 1996 տարեթիւը:*

*Ձեզ բոլորիդ համար այս Նոր Տարին սովորական մի դէպք է. ոչինչ կայ հիմնականօրէն տարբեր նախորդ Նոր Տարիների նշման աւանդական սովորութիւնից: Ինձ համար, սակայն, տարբեր է այս Նոր Տարին: Ես անձնապէս և որպէս*

*Կաթողիկոս Ամենայն Հայոց իմ կեանքում առաջին անգամ լինելով աչքերս բանալու եմ արևին, մի Նոր Տարուայ ծագումին, իմ հայրենիքում: Իմ նո՛ր հայրենիքում, իմ վերանկախացեալ Հանրապետութիւնում, որպէս Հայաստանի լիիրաւ և լիապարտք քաղաքացի, իմ հին, բայց յաւերժօրէն նոր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որպէս միաբան-անդամ և Հոգևոր Հայրը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ուխտեալ և կինուորեալ Միաբանութեանը:*

*Առաջին հերթին սրտի խոր բերկրանքով և առ Աստուած գոհութեան զգացումով ողջունում եմ ձեզ բոլորիդ և Նոր Տարուայ իմ առաջին բառերը փոխ եմ առնում Աստուածաշունչ մատեանից և ասում.*

**«Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս՝**
**Բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո»:**

*Այո՛, ճշմարիտ մարդ էակի առաջին զգացումը՝ առ Աստուած երախտագիտութեան և հաւատարմութեան զգացումն է. դա արարած էակի Արարիչ Էակին ուղղուած գոհաբանութեան և փառաբանութեան արարքն է, որով մարդ կարող է արտայայտել իր վաւերական մարդ-ութիւնը, մարդ լինելու արժանիքը:*

*Այդ նոյն զգացումով այժմ բառերը փոխ առնելով մեր ամենէն հոգելից և ներհայեաց բանաստեղծ Հայրապետից՝ Ներսէս Շնորհալուց՝ ձեզ հետ միասին ասում եմ.*

**«Առաւօտ լուսոյ,**
**Արեգակն արդար,**
**Առ իս լոյս ծագեա:**
**. . . . . .**
**Նորոգող հնութեանց,**
**Նորոգեա՛ և զիս,**
**Նորոգ զարդարեա՛»:**

*Նոյն Հայրապետի նոյնախորհուրդ բառերով դառնում*

*եմ ձեկ՝ հայրենակից ու ճակատագրակից եղբայրներ և քոյրեր, և ասում եմ.*

«Զարթի՛ք, ո՛ր ժողովուրդ,
Նոր երգս առեալ Նորոգողին,
ալէլուիա՛»:

*Այո՛, Նորոգութեան պատգամն է, որ հնչում է այսօր մեր ականջներին և սուզուում մեր հոգիների խորքում: Նոր Տարին ինք իր մեջ ոչինչ ունի նոր. ժամանակը նոյնն է երէկ և այսօր: Ուրիշ արև չէ, որ ծագելու է երկնքում 1996-ի առաջին առաւօտուն: Նորոգութիւնը մե՛ր մէջ, մեր ներաշխարհում ենք որոնելու և իրագործելու: Ներքին հոգևոր, բարոյական, մարդկային և ազգային ապրումների մէջ բիւրեղացում է հարկաւոր, որպէսզի կարողանանք լինել հաւատարիմ մեր իսկութեանը, մեր պարտաւորութեանը և մեր հարազա՛տ մարդու, և՝ հա՛յ մարդու, Հայաստանի մեր սեփական պետութեան քաղաքացու ինքնութեանը, հին տարուան հետ մեկնից դուրս վանելով ինչ որ ժամանակն ու առօրեայ կեանքի պայմանները փոշիի նման կպցրել են մեր ինքնութեան և ինքնարտայայտութեանը վրայ:*

***

*Նորոգութեան այդ հրամայականին ներքև, ես առաջին հերթին նայում եմ ի՛մ մեջ: Հարց եմ տալիս ես ինձ. – Ո՞ւր էի, և ի՞նչ էի սրանից մէկ տարի առաջ, և ո՞ւր եմ և ո՞վ եմ այսօր, 1996-ի շեմին: Ահա հնն ամիսներ սահեցին անցնող տարուայ ընթացքում, որ ես շնչեցի, ապրեցի և գործեցի իմ հայրենական հողի վրայ, մեր բոլորի կողմից Սրբութիւն Սրբոց ճանաչուած Հոգևոր այս Տան՝ Ս. Էջմիածնի հոգեվայրում, իմ ուսերի վրայ շալակելով Հայաստանեայց Եկեղեցու առաջին սպասաւորի ծանրագոյն պարտականութիւնը, մեր պատմութեան այս շրջադարձային հանգրուանում:*

*Առաջին և բնական պարտաւորութիւններից մէկը համարեցի ճանաչել, կենդանի հաղորդակցութեամբ, Հայաստա-*

*նի մեր ժողովրդին և ճանաչուել նրանից, մեր Տիրոջ՝ Յիսուսի խօսքի համաձայն. «Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն»:*

*Սիրելիք, եկեղեցին ժողովո՛ւրդն իսկ է, Քրիստոսով իրար միացած և քրիստոնէական հաւատքով ապրող: Չէի - և չեմ - կարող այդ ժողովրդին ծառայել առանց նրան ճանաչելու: Ահա այս մտքով՝ կատարեցի հովուապետական այցելութիւններ Շիրակի, Արցախի, Գուգարքի, Այրարատեան Հայրապետական թեմի, Երևան մայրաքաղաքի և շրջանների ժողովրդին, եղայ մինչև Մոսկուա, Վրաստան, Օդեսա և մի քիչ անդին՝ նաև Ռումինիա: Զգացի մեր ժողովրդի հոգևոր և ազգային կեանքի տրոփը իմ երակների տրոփի մէջ:*

*Որոշ աշխատանքներ տարուեցին Մայր Աթոռի սիրտը հանդիսացող Հոգևոր Ճեմարանի, նախկին և հոչականուն Գէորգեան Ճեմարանի առաքելութեան, այսինքն՝ հոգևորական սպասաւորների պատրաստութեան, կազմաւորման վերաշխուժացման այնքան կենսական մարզում: Փառք Աստուծոյ, որ նոր երիտասարդ ոյժեր ընդառաջ գնացին Աստուծոյ կոչին և մեր ժողովրդի կարիքներին՝ իրենք իրենց ընծայելով Եկեղեցու սպասաւորութեան սուրբ գործին: Նոր թափ տրուեց քրիստոնէական դաստիարակութեան, մեր ժողովրդի կեանքի բարոյական հիմքերի առողջացման համար քրիստոնէական կրօնի ուսուցումներին տարածման հիմնական գործին: Եօթանասուն տարիների ան-կրօնական, մանաւանդ հակա-կրօնական, ընդարմացնող գոյավիճակից դուրս գալը և մեր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոնէական դաւանանքի և հարազատ հոգևոր աւանդութիւնների վերակենդանացումը մեր ժողովրդի գիտակցութեան և առօրեայ կեանքի ոլորտներում՝ դիւրին գործ չէ. մեծ և հետևողական աշխատանք է հարկաւոր՝ այդ հոգևոր ու բարոյական վերաոողջացման և վերակենսաւորման անմիջականօրէն ստիպողական և անյետաձգելի առաքելութեան իրագործմանը համար:*

*Ահա թէ ի՛նչ մտահոգութիւններով և առաջադրանքներով, և սրանց հետ առնչուած բազում այլ վարչա-*

*կապմակերպչական, շինարարական, նորոգչական, մշակութային, հրատարակչական գործունէութիւններով ու հեռանկարներով առաջնորդուած՝ այսօր ես ողջունում եմ ձեզ* **հոգևոր և ազգային վերանորոգման և բարեկարգութեան տեսիլքը** *առաջարկելով և բացելով ձեր հայացքին որպէս Նոր Տարուայ և գալիք նոր տարիների ազգային-եկեղեցական կեանքի ճանապարհ:*

***

*Իմ հայրական խօսքն եմ ուղղում առաջին հերթին իմ հոգևորական կրտսեր եղբայրներին՝ եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, սարկաւագ սպասաւորներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռը իր հոգևոր և ազգային պատմական առաքելութիւնը ուժեղացնելու և արդիւնաւորելու համար կարիքն ունի մեր բոլորի ամբողջական, անվերապահ և անձնազոհողական նուիրաբերման: Եղբայրնե՛ր, եկէք լինե՛նք հաւատարիմ մեր եկեղեցականի իսկատիպ ինքնութեանը: Ի՞նչ գեղեցիկ բառ է* **հոգևորական** *բառը, այսինքն՝ հոգիի՛ մարդ, Աստծու Ս. Հոգիին ճառագայթները ցոլացնող մարդ: Մեր երկնառաք Վարդապետի սրբախօս շրթներից արտասանուած բառերով՝ լինենք "աղ", որպէսզի մեր կեանք-խօսքը կարողանայ համ տալ մեր հաւատացեալների կեանքին, լինենք "լոյս", որպէսզի կարողանանք լուսաւորել մարդկանց կեանքի ճանապարհը (Տե՛ս ՄԱՏԹ. Ե. 13-16): Թող վերանորոգութեան շունչը մեկնից սկսի:*

*Հայրապետական սիրոյ և հայրենասիրական նախանձախնդրութեան զգացումներով ողջունում եմ մեր հայրենիքի պետութեան բոլոր սպասաւորներին, Վսեմաշուք Նախագահին՝ Մեծայարգ Լևոն Տէր Պետրոսեանին, Ազգային Ժողովի բոլոր անդամներին, մեր Հայրենի Կառավարութեան բոլոր նախարարներին և իրենց օգնականներին:*

*Սիրելիք, պետութիւնը մեր ազգի կապմական, կառու-*

*ցային մարմինն է: Ողջ աշխարհում բոլոր ազգերն իրենք իրենց արտայայտում են պետական կառույցներով: Ես ապրել եմ ուրիշ երկրներում, եղել եմ այլ երկրների քաղաքացի: Տեսել եմ, որ ա՛յն ազգերն են տոկուն, բարեկարգ և ստեղծարար, որոնք գործել են - և գործում են - պետականութեան գաղափարով և պետական առողջ կառույցներով, ժողովրդի ազատ կամքով, ի խնդիր ժողովրդի բարօրութեանը: Մեր ժողովուրդը իր ինքնակառավարման համար ընտրել է ժողովրդավարական սկզբունքը: Մեր պետութիւնը, որպէս արտայայտութիւնը այդ ժողովրդի կամքին, իր գերագոյն կարելին ի գործ է դնում մեր ժողովրդի կեանքի պայմանների բարելաւման համար: Ես լաւ եմ հասկանում այն բոլոր տեսակի դժուարութիւնները, որոնց միջից անցնում է մեր երկիրը, որպէս պետութիւն և ժողովուրդ, իր վերակառուցման այս վճռադրոշմ օրերին: Անցնող շուրջ մէկ տարուայ ընթացքում ես անձամբ հաստատեցի, որ հակառակ բոլոր տեսակի դժուարութիւններին և երբեմն ծանրակշիռ բնոյթ ունեցող տագնապալից կացութիւններին, մեր պետութեանը յաջողուեց քաղաքական, տնտեսական, ապահովական, ընկերային, կենցաղային, յարաբերական մարզերում խաղաղ և կարգացողական կեանքի պայմանները բարելաւել, նշանակալից յառաջդիմութիւններ արձանագրել ի շահ մեր հայրենիքին և ժողովրդին:*

*Բնականօրէն դժուարութիւնները ծանր են և բարդ տարողութիւն ունեն: Թերացումնե՞ր. անշուշտ որ կան. քննադատութիւնները բնական են և անհրաժեշտ: Դեռ հեռու ենք լինելուց այն, ինչ որ ցանկանում ենք լինել: Բայց հարկ է քննադատութեան մէջ նկատի ունենալ բաժակին թէ՛ լեցուն և թէ՛ դատարկ բաժինները: Բոլորիս համար հարկ է առաջնորդուել մեր երկրի պետականութեան ամրացմանը գաղափարով և նախանձախնդրութեամբ: Քաղաքակիրթ և առողջ ազգի յատուկ առաքինութիւն է այդ: Եւ մենք չենք կարող տարբեր մօտեցում ունենալ, քանի մենք մեկ դաւանում ենք որպէս աշխարհի քաղաքակիրթ ազգերից մէկին:*

*Հայաստանեայց Առաքելական և Ազգային մեր*

*Եկեղեցին կը մնայ կօրավիգ մեր պետութեանը, հայրենաշէն գործունէութեան բոլոր բնագաւառներում:*

*Յատուկ սիրով ողջունում եմ մեր Ազգային Բանակին, պատասխանատուութեան բոլոր աստիճանների վրայ: Հայրենիքի պաշտպանութիւնը մի ոնէ երկրի և պետութեան ու ժողովրդի համար նուիրակա՛ն պարտականութիւն է: Բանակը մեր վահանն է, զրահանդերձը: Ես ողջունում եմ բանակի բոլոր ղեկավարներին և այն քաջամարտիկ զինուորներին, որոնք Արցախի և Հայաստանի սահմաններում, տիւ և գիշեր, բուք ու բորանին, թէ կիսկիչ արևի ներքոյ, անձնազոհութեան աքանչելի կեցուածքով անվտանգ պահպանում են մեր սահմաններն, որպէսզի մենք խաղաղ և ապահով ապրենք և ստեղծագործենք մեր հայրենիքի և Արցախի տարածքներում:*

*Ողջունում եմ ձե՛զ, հոգո՛ւ, մտքի՛ և սրտի՛ մշակներ, մտաւորական առաջնորդներ, Ակադեմիայի, Գիտութիւնների, Գիրի և Գրականութեան, Արուեստի բնագաւառների, Համալսարանի, Մատենադարանի, Ազգային Գրադարանի, Ինստիտուտների, Դպրոցների, Մամուլի ոլորտներում գործող եղբայրներ և քոյրեր: Քաջատեղեակ եմ այն նեղութիւններին, որոնք ձեր կեանքում և գործում ծանր են կշռում այս օրերին: Ես էլ, որպէս Եկեղեցու սպասաւոր, ինձ զգում եմ ձեզ հարազատօրէն հաղորդ: Հոգու, մտքի և սրտի սպասաւորներիս կոչումի և շաղուածքի մէջ բնական երևոյթ է տոկունութիւն կոչուած առաքինութիւնը: Չտարուենք սպառողական ընկերութեան յատուկ կենցաղային այսպէս կոչուած այն "առաւելութիւններից", որոնք հեշտակեցութեան մակերեսային երևոյթներ են: Տանենք մեր գործը մնալով միշտ հաւատարիմ ոգեկան արժէքներից ճառագայթող գոհութեան զգացումով և լինենք լոյսի և յոյսի առաքեալներ և ո՛չ թէ նեղութեան ու դառնութեան զոհեր: "Հոգին է կենդանարար" ասում է Աւետարանը: Պատմութիւնը վկայ՝ դիւրակեցութիւնը երբեք չի եղել իմ ու ձեր նախորդների կեանքի ուղեգիծը: Մեր ոսկեղէն*

դարերը, մեր մեծ նուաճումները ծնուել են տագնապալից կացութիւններից: Մնա՛նք պատնէշի վրայ, մեկ վայել բարոյական դիմացկունութեամբ և ստեղծագործական աշխատանքի յարաճուն վկայութիւններով:

Ողջունում եմ մեր ժողովրդի տարապանքներին թեթևացում ընձեռող բոլոր մարդասիրական և բարեգործական, խնամատարական հասարակական կազմակերպութիւններին և բարերար անձերին, որոնք "Բարի Սամարացու" կերպարով և ոգով են գործում, հիւանդներին, որբերին, վիրաւորներին, տարիքաւորներին, հաշմանդամներին, բոլոր տեսակի ընկերային չարիքներից հարուածեալներին ցաւն են դարմանում, վիշտն են ամոքում, վէրքերն են բուժում, անունդ են մատակարարում, յուսահատութեան մթութեան մէջ յոյս և լոյս են ցաթեցնում բոլոր կարիքաւորներին կեանքում: Ինչ որ անում են Աստծու որդիներին և հայրենիքի կաւակներին համար՝ աստուածահաճոյ գործ է և հայրենաշինական աշխատանք: Թող մարդուն համար տառապած և խաչուած Յիսուսը իր կենարար խաչովն օրհնի բոլորին՝ և՛ կարիքաւորներին և կարիքներն հոգացողներին:

Մարդասիրական և հայրենաշինական ու կարգացողական մարկերում ողջունում եմ "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամի բոլոր անդամներին, մարմիններին և գործողներին, այն հաստատ համոզումով որ համահայկական իր նկարագրով Հիմնադրամը կը դառնայ համադրիչ ոյժ, համակարգիչ կառոյց և արդիւնագործաբար աշխուժացող գործօն մեր հայրենիքի վերականգման նուիրական առաքելութեան մէջ:

Ողջունում եմ ձեզ, հայոց նո՛ր սերնդի կաւակներ, երիտասարդներ, համալսարանների և ինստիտուտների ուսանողներ, դպրոցական աշակերտներ: Հայրենիքը ձե՛րն է: Նրա վերականգնումը և կարգացումը ձեր ճիտին պարտքն է: Նեղութեան այս ժամանակներին, դուք բաշմապատկեցէ՛ք ձեր ջանքերը: Նեղութիւնը չի եղել մեկ ընկճելու համար: Դուք կաք նեղութի՛ւնը ընկճելու համար: Այս թող լինի ձեր կեանքի նշանաբանը: Սիրտս հրճւում է, երբ տեսնում եմ ձեզ պա-

*տասխանատուութեան զգացումով լծուած ինքնապատրաստութեան լուրջ գործի: Սիրտս խայտում է, երբ ամէն անգամ տեսնում եմ և լսում մանկանց երգչախմբերին և նուագախմբերին, և արուեստի այլ ելոյթներով աճող և հասունացող մեր պատանիներին: Դուք կարկաչն էք մեր գետերին, ծաղիկն էք մեր ծառերին: Ապրէ՛ք, երեխէք:*

*Ողջունում եմ մեր հայրենաբնակ պարզ ժողովրդի բոլոր կաւակներին, անխտիր, աշխատաւորներին, որոնք գործարաններում են գործում, շինականներին, որոնք հողից կեանք են դուրս բերում, ճարտարարուեստի բնագաւառներում գործարարներին, որոնք արդիական ճարտարաշինութեան բարիքներն են տարածում մեր հայրենիքում, պաշտօնեաներին, որոնք հաստատութիւններում են գործում: Լինէք պարկեշտ, պարտաճանաչ, հաւատարիմ, աշխատունակ, ընտանեասէր, աշխարհաշէն և հայրենակերտ: Սա՛ է մեր հայի ճակտի գիրը: Սա՛ է եղել մեր պատիւը: Սա՛ է հանդիսացել մեր հայրենիքի անսասանութեան, կօրութեան և կարգացման աղբիւրը: Սա՛ է նաև լինելու մեր ապագայի յաղթանակի գրաւականը:*

*Մենք մեր ձեռքերովը, մեր քրտինքովը պիտի վերակերտենք, պիտի յարակերտենք մեր հայրենիքը: Դա՛ է իրական հայրենիքը՝ այսինքն* "**մե՛ր հայրենիքը**": *Դրսից, թէ՛ արտասահմանի մեր եղբայրներից և քոյրերից և թէ՛ մեկի բարեկամ ազգերից, պետութիւններից, Եկեղեցիներից, միջազգային տարբեր օգնութեան կազմակերպութիւններից գալիք օժանդակութիւնը չի կարող մեր ձեռքերին և քրտինքին փոխարինել. կարող է մեր ձեռքերին ոյժը և մեր քրտինքին հոսքը առատացնել: Ա՛յս է հայրենաշինութեան իսկական փիլիսոփայութիւնը: Թող մեր կեանքը լինի այդ փիլիսոփայութեան գործնական արտայայտութիւնը:*

*Իմ խօսքն եզրափակելով՝ ես շնորհաւորում եմ ձեր բոլորի Նոր Տարին:*

*Փա՛ռք Քեզ, Տէր Աստուած հարցն մերոց, որ* 1995*-ը մեր*

*Եկեղեցու, մեր ժողովրդի, մեր հայրենիքի և մեր պետութեան համար եղաւ մի խաղաղ տարի և յառաջդիմութեան մի նոր շրջան: Աղօթում եմ Քեզ, Տէ՛ր, որ 1996-ը լինի աւելի՛ պայծառ, հայրենիքը մնայ անվտանգ, Եկեղեցին՝ տոկուն և գործուն, պետութիւնը՝ ամուր և յառաջագնաց և ժողովուրդը՝ առաւել երջանիկ:*

**«Նորոգող հնութեանց,**
**Նորոգեա՛ և զմեզ,**
**Նորոգ զարդարեա՛»**

*ի նորացեալ հայրենի աշխարհս մեր, ընդ հովանեաւ ամենատես Աչաց Քոց, օգնականութեամբն ամենակօր Աջոյ Քո, և ի խնամս մարդասիրութեան Քո. ամէն:*

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Ս. Էջմիածին*
1 *Յունուար, 1996*